**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 03-ը դեկտեմբերի 2018թ.
Ժամը $11^{00}$

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 29.11.2018թ., ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 03.12.2018թ.: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:

Մասնակցում էին՝
***Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝***
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան:
***Քարտուղար՝***
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

Հանձնաժողովն արձանագրեց աճուրդի արդյունքների ամփոփման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարություններն ուսումնասիրելուց հետո:

**05.12.2018թ., ժամը 11:00**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Տերյան)

1.1 Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ ՀՀ ՊՆ կարիքների համար «Տավարի միս» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «Էրիգ» ՍՊԸ |
| 2. | «Այ էքս Գրուպ» ՍՊԸ |
| 3 | Ա/Ձ Համլետ Հովսեփյան |
| 4 | «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ |
| 5 | «Միտք-Կ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Տերյան)

2.1 Eauction համակարգի կողմից չմերժված մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** առկա են:

2.2 Վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունները** համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Այ էքս Գրուպ» ՍՊԸ, որտեղ լիազորված անձի կողմից դրված էլեկտրոնային թվային ստորագրությունը ակտիվ չէ: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

---

(Գ. Տերյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Eauction համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները. **Տես Հավելված N 1:**

3.2 «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ և «Միտք-Կ» ՍՊԸ հայտերը համակարգի կողմից մերժվեց նախահաշվայինից բարձր գնային առաջարկ ներկայացնելու հիմքով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Գ. Տերյան)

4.1 **10.12.2018թ.** հիմք ընդունելով **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունների** գնահատման արդյունքները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ըստ չափաբաժինների 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Էրիզ» ՍՊԸ՝ ***Տես արձանագրությանը կից Հավելված 1:***

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Գ. Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Ա. Մարգարյան |
| **Գնահատող** | Ս. Պետրոսյան |
| **Գնահատող** | Վ. Ասատրյան |
| **Քարտուղար** | Գ. Տերյան |

հավելված 1

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվային գին | Ընկերություն | | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցության իրավունք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | տավարի միս ոսկրոտ (Տավարի միս) | կգ | 396622 | 693295256 /համակարգի կողմից նշվել է 693295232/ | 1 | Էրիզ ՍՊԸ | 577085010 | 20% | 692502012 | 538458289 | 20% | 646149946.8 | |
| | | | | | 2 | «Այէքս Գրուպ» ՍՊԸ | 793244000 | 20% | 951892800 | 544229140 | 20% | 653074968 | |
| | | | | | 3 | Ա/Ձ Համլետ Հովսեփյան | 694088500 | 20% | 832906200 | 550000000 | 20% | 660000000 | |
| | | | | | 4 | Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ ՍՊԸ | 581712266.7 | 20% | 698054720 | 581712267 | 20% | 698054720 | Մերժված |
| | | | | | 5 | Միտք-Կ ՍՊԸ | 826295833.3 | 20% | 991555000 | 826295833 | 20% | 991555000 | Մերժված |